ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՎԱՅՆԱՑՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ ԱՐՇԱԿ ՔԵՐՈԲՅԱՆԻ ԵՎ ԾՐԱԳՐԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ ՀՐԱՆՏ ՄԿՐՏՉՅԱՆԻ ԿՈՐԵԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ (Ք. ՍԵՈՒԼ) ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը՝**

Արշակ Քերոբյան

Հրանտ Մկրտչյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության թվայնացման վարչության պետ

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության ծրագրերի վարչության պետ

3. **Գործուղման վայրը և ժամկետները՝**

Կորեայի Հանրապետություն (քաղաք Սեուլ), 2023թ. սեպտեմբերի 11-ից 14-ը:

4. **Հրավիրող կողմը՝**

Պետական ծառայության «Աստանա ՀԱԲ»-ը՝ Կորեայի Հանրապետության (այսուհետ՝ Կորեա) ներքին գործերի և անվտանգության նախարարության ու Տեղեկատվական հասարակության հարցերով ազգային գործակալության հետ համատեղ:

5. **Գործուղման նպատակը՝**

Մասնակցություն 2023թ. սեպտեմբերի 11-ից 14-ը Կորեայում (ք. Սեուլ) «Հանրային կառավարման և հանրային ծառայությունների թվայնացման նորարարության հզորացում» ծրագրի շրջանակներում «Աստանա ՀԱԲ»-ի կողմից կազմակերպվող ճանաչողական այցին: Միջոցառումը հանդիսանում է «Հանրային կառավարման և հանրային ծառայությունների թվայնացման նորարարությունների զարգացման կարողությունների հզորացում» ծրագրի մի մասը, որը մեկնարկել է 2021թ. Կորեայի կառավարության հետ համատեղ՝ բարձրացնելու պետական

պաշտոնյաների և գործնական աշխատողների կարողությունները և արագացնել հանրային ծառայությունների թվայնացումը «Աստանա ՀԱԲ»-ի մասնակից յոթ երկրներում (Ադրբեջան, Հայաստան, Վրաստան, Ղազախստան, Ղրղզստան, Տաջիկստան և Ուզբեկստան):

6. Քննարկված թեմաները.

Այցի շրջանակում կայացած հանդիպումների ընթացքում քննարկվել են երկկողմ և բազմակողմ համագործակցության հնարավորությունները, ոլորտային զարգացման նպատակով համատեղ ծրագրեր իրականացնելու ներուժն ու հեռանկարները:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Ճանաչողական այցը բաղկացած էր աշխատաժողովից և տարբեր պետական ու մասնավոր կազմակերպություններ այցելություններից: Սեմինարը կենտրոնացած էր Կորեայի հանրային հատվածի թվային վերափոխման փորձի ներկայացման վրա: Սեմինարի ընթացքում մասնակից պետությունների ներկայացուցիչների կողմից ներկայացվել են նաև շնորհանդեսներ, որոնք ընդգծել են թվային վերափոխման առկա վիճակը մասնակից երկրում:

Ճանաչողական այցերը հնարվորություն են տվել տեղեկատվություն ստանալ թվայնացման ոլորտի արդիական հարցերում՝ կենտրոնանալով առանձնահատուկ հետաքրքրություն ներկայացնող ոլորտների վրա. Նման ոլորտները որոշվել էին հիմնվելով մասնակիցների մասնագիտական կարիքների վրա, որոնք բացահայտվել են կարճ ժամանակահատվածում իրականացված հետազոտությամբ, ուստի, խիստ օգտակար են եղել, քանի որ արտահայտել է՝ ճանաչողական այցի մասնակիցների ոլորտային նախասիրություններն ու հետաքրքրությունները:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

2023թ. սեպտեմբերի 11-ին «Աստանա ՀԱԲ»-ի ներկայացուցչի և գրասենյակի փոխտնօրենի կողմից ներկայացվել են հետևյալ թեմաները.

1) Կառավարության դերը թվային հասարակության ձևավորման հարցում:

2) Կորեայի թվային կառավարության նոր տեսլականը:

Այնուհետև, մասնակից երկրների ներկայացուցիչները ներկայացրել են շնորհանդեսներ:

ՀՀ ներկայացուցիչները ներկայացրել են շնորհանդես «Հայաստան. Հանրային հատվածի թվայնացման վերջին զարգացումները» վերտառությամբ, ապա հաջորդաբար Ադրբեջանի ներկայացուցիչը՝ «Նորարարությունները Ադրբեջանի հանրային հատվածում», Վրաստանը՝ «Թվային փոխակերպում. Վրացական փորձ», Ղազախստանը՝ «Ղազախստանի թվային փոխակերպումը», Ղրղզստանը՝ «Ղրղզստանի թվային զարգացում» և Ուզբեկստանը՝ «Ուզբեկստանի թվային զարգացման հեռանկարները» խորագրերով:

Ս.թ. սեպտեմբերի 11-ին մասնակիցներն այցելել են նաև «Կորեայի ամպային տեխնոլոգիաների կենտրոն»՝ «KAKAO enterprise», որտեղ ներկայացվել է կենտրոնի գործունեության ռազմավարությունը, այս ոլորտում Կորեայի փորձը և գրանցած հաջողությունները:

Ս.թ. սեպտեմբերի 12-ին մասնակիցներն այցելել են «Կորեայի թվային կառավարության ցուցասրահ» (Digital Government Exhibit Hall): Վերջինս ցուցահանդեսային և փորձառական հաստատություն է, որը նպաստում է Կորեայի թվային կառավարության զարգացմանը և աջակցում կորեական ձեռնարկությունների ընդլայնմանը:

Հաջորդ հատվածում ներկայացվել է «Կորեայի թվային կառավարության համեմատական քաղաքականությունը», այդ թվում՝ «Տվյալների վրա հիմնված կառավարում», «Հանրային տվյալների քաղաքականություն և պրակտիկա», «Բջջային նույնականացումը Կորեայում»: Այց է կատարվել նաև Կորեայի «Առաջադեմ գիտության և տեխնոլոգիաների կենտրոն», որտեղ դասախոսություն է ներկայացվել միջոցառման մասնակիցների ոլորտում առկա իրավիճակի և ընթացիկ զարգացումների մասին:

Ս.թ. սեպտեմբերի 13-ին մասնակիցներն այցելել են «Ինչհոնի ազատ տնտեսական գոտի», մասնավորապես՝ գործառնական կենտրոն՝ «Սմարթ սիթի»:

Գործուղման ընթացքում որպես չափելի արդյունքային ցուցանիշներ կարող են առանձնացվել հետևյալները.

- Աշխատաժողովի ընթացքում հնարավորություն է տրվել ունկնդրելու տասնյակ երկրների ոլորտային փորձի ու հաջողությունների մասին:
- Ապահովվել է գործընկերային շրջանակների թվի աճ, ինչը խթան կհանդիսանա համատեղ ծրագրերի կենսագործման և փորձի փոխանակման համար:
- Գործուղումը նպաստել է նաև թվայնացման ոլորտում գիտելիքների ծավալի աճին՝ օրակարգային թեմատիկ ուղղություններին համապատասխան:

- Կիբեռանվտանգային քաղաքականության տարածաշրջանային և միջազգային փոփոխությունների, մասնավորապես՝ կորեական փորձի հիման վրա վստահության ամրապնդման միջոցառումների վերլուծություն:
- Գործուղման ընթացքում ձեռքբերված գիտելիքները նպաստել են նաև մասնագետների պատրաստման կամ վերապատրաստման, միջազգային փոփոխությունների ուղղությամբ տարվող կրթական ծրագրերի մշակման, ինչպես նաև արդեն իսկ հաջողություն գրանցած կրթական կենտրոնների փորձի ներդրման ուղղությամբ՝ քայլեր ձեռնարկելու կիբեռանվտանգության և բարձր տեխնոլոգիական մի շարք ոլորտներում:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Այցի ընթացքում պայմանավորվածություններ են ձեռք բերվել՝ շարունակել քննարկումները համագործակցության ընդլայնմանն ուղղված ծրագրեր իրականացնելու վերաբերյալ:

10. Ստորագրությունը, ամսաթիվը.

Արշակ Քերոբյան

Հրանտ Մկրտչյան

19.09.2023թ.